ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

27.06.2024թ. թիվ 25-Լ որոշմամբ

Ուժի մեջ է 01.07.2024թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀՀ Կառավարության «Արտադրողականության խթանման միջոցառման» շրջանակներում տրամադրվող վարկեր/լիզինգներ

Պայման	Վարկ	Լիզինգ
Նվազագույն և առավելագույն գումարը/ ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամից մինչև 1,000,000,000 ՀՀ դրամ
Թիրախային ընկերությունների սեգմենտ	Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը	
Առավելագույն ժամկետ	120 ամիս	
Առավելագույն մայր գումարի վճարման արտոնյալ ժամանակաշրջան /ամիս/	Մինչև 6 ամիս	
Սուբսիդավորման ժամանակահատվածը	Մինչև 42 ամիս	
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք	14.50%-15.50%	14.50%-15.50%
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք	10.00%- 11.00%	10.00%- 11.00%
Եվրոյով ֆիքսված տոկոսադրույք	8.00%- 9.50%	8.00%- 9.50%
ՀՀ դրամով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքներ սուբսիդավորման չափ	8%	10%
Արտարժույթով տրամադրված վարկերի/լիզինգների տոկոսադրույքներ սուբսիդավորման չափ	6%	8%
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից	0%	
Լիզինգային ֆինանսավորման դեպքում կանխավճարի չափ	Նվազագույնը լիզինգի առարկայի արժեքի 20% (լիզինգի կանխավճարի ապահովագրության դեպքում, կանխավճարի չափը կարող է սահմանվել 0%)	

Հատուկ նշումներ	1. Օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը յուրաքանչյուր տնտեսավարողի համար յուրաքանչյուր վարկի/լիզինգի համար սահմանվում է 2021թ-ին և դրանից հետո կանոնադրական կապիտալում կատարված ներդրման հնգապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 10 մլրդ դրամ (արտարժույթով վարկավորման մասնաբաժինը՝ 5 մլրդ դրամին համարժեք դրամ)՝ փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսավարողների՝ միջոցառման շրջանակներում տրամադրված վարկի/լիզինգի սուբսիդավորվող մասի հանրագումարով, ընդ որում, սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածում կանոնադրական կապիտալի նվազեցում չի թույլատրվում: 2. Վերը նշված արտոնությունը չի տարածվում D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» և «F (ԷՖ) «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վրա: 3. Սույն նպատակային ծրագրի արտոնությունից օգտվող տնտեսավարողները մինչև վարկի/լիզինգի պայմանագրի ստորագրումը պարտավոր են ֆինանսական կազմակերպությանը ներկայացնել կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև կանոնադրական կապիտալում 200 մլն դրամ և ավելի ներդրում իրականացրած տնտեսավարողը պայմանագրի ստորագրմանը հաջորդող տարվա ընթացքում և դրան հաջորդող սուբսիդավորման տարիների ամբողջ ընթացքում պարտավորվում են ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ, ինչպես նաև 500 մլն դրամ և ավելի շրջանառություն ունեցող աուդիտորական ընկերությունների կողմից արտաքին աուդիտի եզրակացություն: 4. Լիզինգառուն լիզինգի առարկայի արժեքի կանխավճարի փոխարեն կարող է ներկայացնել կանխավճարի գումարի ապահովագրության :